իմ չերթամ և նա ի Մուղնի՝ ոչ դիւրանայ քաղաքս։ Եւ ըսկսի նա թէ Սուչն եւ Ղնասն ի՞նչ է որ ելանէ ի քաղաքէս. մինչեւ դիպել ընդ իրեարս, եւ Վարդապետն Պիղծ եւ չուն ասելով նմա ի դուրս հանեն։ Եւ նա գնացեալ անդ յԱստուածածին եւ ժողովեն զիւրեանց արս ի խորհուրդ։

Եւ առաւօտուս Փետրվարի Ա և Զչի։ Ահա երեք աւուրքք եւ այլ ոչ եւս ըստ պատշաճին ասաց քարոզ Մարտիրոս վարդապետն, և ասէ. Ժողովո՛ւրդք, ո՞վ զիւր մեռելն թողու եւ զայլոցն լայ, ո՞րպէս է. եւ այս բանս որ ի գլուխ Երուսաղէմի եկեալ է, աշխարհաւ և ազգաւ պիտիր հոգանք։ Ահա՛ արք ոմանք յամենայն աւուր սինհոդոս առնեն եւ չէ խաղաղութիւն և չեն թողուր զի զմեր հոգասցուք։ Ահա՛ քանի օր է որ բերաք զհոգեւոր հայր եւ եղբայր Եղիազար վարդապետն՝ թէ հոգայ, նա՛ խառնակիչք եւ չարք հանդստութիւն ոչ տալով. զէջմիածինն ի ձեռաց ո՞վ կ'առնէ, յառաջնորդութենէ Մուղնեցոյն մեք ի՞նչ կ'ուզեմք. դուք աղօթեցէ՛ք որ Երուսաղէմայ բանն յառաջ երթայ. և սոյնպիսիք։ Եւ Մուղնեցիքն գրեալ գիր յամենայն յեկեղեցի թէ Ժողով ունիմք[1]), եկէ՛ք. եւ մերայինք ասացին. Զիա՞րդ է ժողով եւ քանի՞ անգամ. երեք տարի ասացեալ է կաթողիկոսն մեզ՝ մի առաջնորդ, հնազանդ եմք։ Եւ գնացեալքն անդ նստին եւ հանեն կոնտակ հաստատութեան առաջնորդութեան Մուղնեցուն մինչև ի մահ. նաև եկեղեցեաց և իւրեանց բարեկամաց մինչև համարով ԼԲ թուղթ։ Եւ լուեալ զայս արք ի մէնջ ե Զ ոգի՝ գնացեալ ի սինհոդոսն աւիրեցին, և նոքա տեսեալ՝ յարձակին ի վերայ սոցա, և լինի կռիւ մեծ։ Եւ լուեալ զայս Եղիազարին՝ բարկանայր նեղանայր եւ ելեալ թէ ի Պուր-

1) ունիմ.